ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների Մեծամոր համայնքի գյուղերի գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/71 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025 թվականի սեպտեմբերի 3-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/71-3 ծածկագրով պայմանագրում 2026 թվականի ապրիլի 30-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ. Կատարողի կողմից ստացված գրության և պատասխանատու ստորաբաժանման համապատասխան զեկուցագրի հիման վրա՝ Մեծամորի համայնքապետարանի և «ԳՈՑ» ՍՊԸ և «Արտ Պլաս» ՍՊԸ կոնսորցիումի միջև 2025 թվականի սեպտեմբերի 3-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/71-3 պայմանագրի կատարման ժամկետի երկարացման անհրաժեշտություն:

Փոփոխության նկարագրություն. Մեծամորի համայնքապետարանի և «ԳՈՑ» ՍՊԸ և «Արտ Պլաս» ՍՊԸ կոնսորցիում-ի միջև 2025 թվականի սեպտեմբերի 3-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/71-2 պայմանագրի.

- Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ի «Ժամկետը**» սյունակում նշված 6-րդ չափաբաժնի մասով աշխատանքերի կատարման ժամկետը խմբագրվել և ներկայացվել է նոր շարադասությամբ հետևյալ կերպ. «…Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 2026 թվականի հունիսի 1-ը, համաձայն հավելված 2.1-ով ներկայացվող օրացուցային գրաֆիկի» բառերով:
- Պայմանագրի Հավելված թիվ 2.1-ով և 13.10.2025թ. կնքված Համաձայնագիր 1-ի Հավելված N 1-ով ներկայացված 6-րդ չափաբաժնի մասով «ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ»- ի փոխարեն հիմք ընդունվել և հաստատվել է կից Հավելված 1-ով ներկայացված «ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ»-ը
- Պայմանագրի Հավելված 3-ով հաստատված վճարման ժամանակացույցը՝ 6-րդ չափաբաժնի մասով, ինչպես նաև 13.10.2025թ.-ին կնքված Համաձայնագիր 1-ի Հավելված N 2-ով հաստատված վճարման ժամանակացույցը՝ 6-րդ չափաբաժինների մասով փոփոխվել և շարադրվել է նոր խմբագրությամբ, համաձայն՝ կից ներկայացված Հավելված 2-ի:

Փոփոխության հիմնավորում. Հիմք ընդունելով Պայմանագրի 1.1, 8.5 և 8.8 կետի համաձայն, միաժամանակ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ չի վերացել գնման պահանջը, ինչպես նաև հիմք ընդունելով 2026 թվականի փետրվարի 12-ի ՀՀ Կառավարության N 142–Ա որոշումը:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**